

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. ՄԱՂԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԱՆԳ ՆԱԳՐՈՂՈՂ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Պատմական ոճավորմանը նպաստող քերականական միջոցները պարկերվող դարաշրջանին բնորոշ հարազատ քերականական իրողություններն են: Մյուսփան Զորյանի պատմավեպերի ընդգրկած ժամանակաշրջանին հիմնականում հատուկ են գրաբարյան քերականական իրողությունները, համանիշ ձևերի ընտրության մեջ, եթե դա առնչվում է պատմական ոճավորմանը, գրողը միշտ նախապատվությունը տալիս է հին ձևերին: Դա նկատվում է ինչպես բառապաշարի, նույնպես էլ քերականության մեջ: Այսպես մեզ զբաղեցնողը արձակագրի եռագրությունն է՝ «Պապ թագավոր» (1944), «Նայոց բերդը» (1960) «և «Վարազդար» (1967) վեպերը, որ բավական լավ ընդունեց ընթերցող հասարակությունը: Այս սյուժեգործություններում բնականաբար Մ. Զորյանը գործածել է բազմաթիվ հնացած, գրաբարյան ձևեր, հատկապես հոլովման և խոնարհման համակարգերում, որոնք առկա են նաև այլ գրողների երկերում: Պատմավեպերում գուցա հեռաբար գործածված են հոգնակի թվի սեռական-տարական հոլովների և՛ գրաբարյան, և՛ աշխարհաբարյան ձևերը: Տեղանունները և այդպիսի բնակվող ժողովուրդների անունները սովորաբար բերվում են գրաբարյան հոգնակի սեռական-տարականի ձևով՝ **-սց, -ոց, -ից, -ուց** վերջավորությամբ: Այսպիսի ձևերը և՛ հերոսների, և՛ հեղինակային խոսքում անչափ բնական ու հարազատ են հնչում՝ սրելով լավ պատմական անցյալի երանգավորում: Դրանք են՝ արքունյաց, իմաստասիրաց, հայրենյաց, սիրելյաց, շինականաց և այլն: Ահա օրինակ՝ «Եթե բյուզանդացիք մնալու են մեր երկրում և ապրելու են մեր շինականաց տներում՝ առավել լավ չէ՞ բնակարարելի կառուցեն իրենց համար» («Պապ թագավոր», 1962, 110), կամ «Նրանք շատ հաճախ ենթակա են լինում հեթանոսաց ուրնձգությանց» («Նայոց բերդը», 1959, 351), «Այս ամենը, փերի ավազներ, պիտի մնա հույժ գաղտնի, ոչ մի բառ ընտանյաց, բարեկամաց, առանձնապես թագուհուն ու թագաժառանգին» («Վարազդար», 1967, 23) և այլն:

Նամանման ձևով են կազմվում ազգերի անունները՝ հայոց, պարսից, հունաց, վրաց, հանդիպում են նաև մարդոց, գերեզոց, հնոց, մարից, փիլիսոփայից ձևերը, որ գործածված են նաև հեղինակային խոսքում: Այսպես օրինակ՝ «Պալատի կառավարիչ իշխան Զենուն

Գնունին վարժ էր հունաց եւ լափինաց լեզուներին» (Վ., 57), կամ «Չէր կամենում խորհել գերի ընկած եւ վերադարձրած Շապուհի կանանոցի մասին» (Ն. ք., 518) եւ այլն:

Բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, թե ինչպես Զորյանը, հաճախ տեղին գործածելով հնաբույր մի բառ կամ գրաբարյան մի ոճ, դարձվածք, կարողանում է սպեղծել համապատասխան լեզվական միջավայր՝ ամենեւին չխախտելով ժամանակակից գրական լեզվի օրինաչափություններն ու ընդհանուր ոգին: Նաբառի առկայությունը հեղինակի խոսքում գլխավորապես կապված է ոճի ներդաշնակության հետ, ուստի եւ պահանջվում է մեծ վարպետություն ու սպեղծագործական նրբանկարություն: Օրինակ. «Բայց եւ այնպես ամենքը հարգում էին նրան (Երեմիային - Մ. Մ.) նախ, որ Ամստրոնյաց նշանավոր փոհմից էր, երկրորդ՝ որ չորս-հինգ տարի Պապի հետ եղել էր Բյուզանդիոնում եւ հմուտ էր իմաստասիրաց եւ փիլիսոփայից գրոց» (Պ. թ., 312):

Նույն կերպ են հոլովվում նաեւ իշխանական փոհմերի անունները՝ Մամիկոնեից, Արծրունյաց, Կամսարականաց, Արշակունյաց, Գաբեղենից եւ այլն, ինչպես նաեւ պարսկական անձնանունները՝ Ծովագ Մար, Գողթանից Ապոմ, Դիմաքսենից Արսեն եւ այլն: Ահա օրինակ. «Դրանք Վարաժնունյաց նախարար Սեթն էր, մի պատկառելի ծերունի, Գեղարքունյաց տերը, նույնպես տարեց մարդ, եւ Գուգարաց բղեշխի եղբայրը: Եկողների մեջ էին նաեւ Արեղենից տերը, Դիմաքսենից նահապետը, Ծովագ Մարը, Զորուց Գորուբը» (Վ., 7):

Նապուկ անուններից մի քանիսի սեռական-տրական հոլովները կազմվել են ա հոլովիչով, ինչպես Վանանդա, Տրդատա եւ այլն: «Տրդատա դռների առաջ նրան դիմավորեց հազարապետ Գնունին» (Ն. ք., 424): Նապուկ անունների մի մասը, որ վերջանում է -իանով, սեռականում հաճախ սրանում է գրաբարյան -ոյ վերջավորությունը, ինչպես՝ Բյուզանդիա - Բյուզանդիոյ եւ այլն:

Չափի զգացողությունը, սակայն պարտադրում է, որ հոգնակի թվի կազմության միօրինակությունից խուսափելու համար հաճախ դիմել շեղումներով, որոնք մեծ թիվ չեն կազմում: Ազգանունների գրաբարյան ձևերի կոդքին, հեղինակային խոսքում երբեմն գործածվում են նաեւ աշխարհաբարյան հոգնակիով ձևեր՝ հին ազգանունների -ունի վերջավորությամբ՝ Արշակունիներ, Գնթունիներ, Խորխոռունիներ, Տրունիներ, Պալունիներ եւ ուրիշներ: «Բոլորը՝ թե՛ Վահեունիները, թե՛ Ծովագ տերերը, թե՛ Տրունիները պարտավոր էին նույնքան մարդեր տալ» (Պ. թ., 667): Ինչպես տեսնում ենք «մարդ» բառի հոգնակին -իկ վերջավորության փոխարեն ստացել է -եր վերջավորությունը, որը նույնպես շեղում է, բայց օրինակելի չէ:

Երկխոսություններում եւս գործածված են հոգնակի թվի կազմության գրաբարյան եւ աշխարհաբարյան ձևեր, որոնք նպաստում են հերոսների խոսքի փխպականցմանն ու պարսկականության առաջացմանը: Օրինակ. «Լուրեր եմ առնում, որ նա (Պապը- Մ.Մ.) երկրասարդ նախարարաց շրջանում ավելորդ է համարել կուսանոցներն ու անկեղանոցները, թե իբր ամենայն մարդ պետք է աշխարհի եւ պողաբերի եւ զավակաց տեր լինի...» (Պ. թ., 353), կամ՝ «Նոր ավանը պիտի դառնա ամրակուռ բերդ՝ ոչ միայն օդար թշնամյաց դեմ, այլ մեր չարամիտ նախարարների, որ ցայց ու ցերեկ խորհում են միայն իրենց

որկորի մասին եւ չեն կամենում գորավիզ լինել երկրին հայրենի» (Ն. ք., 223): Բերված օրինակներում խոսքին պարամականության երանգ են հաղորդել բառերի եւ՝ գրաբարյան հոգնակիի եւ՝ երադաս շարադասական ձեւերը:

Նոգնակի թվի կազմության միօրինակությունը խախտվում է նաեւ, երբ -եր եւ -ներ մասնիկների փոխարեն հոգնակի է կազմում գրաբարյան ք հոգնակերպ մասնիկով՝ քրիս-պոնյայք, թշնամիք, մույկք, կայսերք, շինականք, ծառայք եւ այլն: «Երբ հանդգնությունը հասնում է այդ աստիճանին, պետք է դիմել զենքի, սույնպիսի դեպքերում վարվում են իմաստուն կայսերք» (Վ., 373), «Գրյանքը, իրոք, մոլորեցնում են մարքերը եւ ավելացնում հանցանքները» (Պ. թ., 348), «Եւ կայսր կամենում է, որ հայք իգուր, իրենից դուրս ուրիշ բարեկամներ չփնարեն» (Վ., 88), «Իսկ ես, փխարք, ես մինչեւ իսկ երկյուղ ունեմ, որ իմ մարդերը սպանեն ինձ...» (Ն. ք., 24):

Որոշ դեպքերում շեղումներ են նկատվում նաեւ հեղինակային խոսքում ուրք, ձեռք, կուրծք բառերի հոգնակիի ձեւերում՝ ուրքներ, ձեռքներ, կուրծքներ: Օրինակ. «Ալիս էին, հեւրն էլ ձեռքում կուրծքները եւ ձեռքները...» (Ն. ք., 71): Նման ձեւով է կազմել նաեւ կայսր բառի հոգնակին. «Կոստանդ եւ Նուրիանոս կայսրները...» (Ն. ք., 264): Գործածել է նաեւ բերդցիք ձեւը. «Բերդցիք մնում էին բերդում եւ պարարասություն փնսնում վաղվա համար» (Ն. ք., 550):

Միանգամայն պետին են գործածված ժամանակի հեռավորություն հարկանշող, խոսքի պարամականությունն ապահովող բազմաթիվ նախդրավոր ձեւեր ու կապակցություններ, որոնց մի մասն այժմ գործածվող քարացած ձեւեր են՝ ի սեր ասարծո, ի վերջո, բարին ընդ ձեզ, իսկ մյուսները՝ գրաբարյան բնույթ ունեն: Ինչպես՝ ի հարգանս, ի հասարարումն իր խոսքի, ի շարս այլ վայրերի, ի դեպս վրանգի, ի լրումն ամենի, ի դեպս պարերազմի, հարկ է ի գործ դնել, հառաջ, հորինակ այլոց, առ ուրս գնալ, առ ոչինչ համարել, առ հյուրը, առ օրարը, սիրով լինեն առ Բյուզանդիան, առ մեզ եւ առ ժողովուրդը, ըստ այդմ, ըստ այսմ, ցայժմ եւ այլն: Բերենք օրինակներ. «- Ոչ, թագուհիս,- առարկեց հազարապետը,- պարշաճ չէ, որ ինքդ գնաս առ ուրս Ներսեսի» (Ն. ք., 418), «Ահավասիկ եկել եմ առ քեզ, որպես Նայոց Աշխարհի վեհագույն դարավորի...» (Ն. ք., 282), «Բաժանել նոցա, ովքեր իվիճակի են զենք ի գործ դնելու» (Ն. ք., 349), «Սակայն ինչպե՞ս է, որ այդ անհայր էր ցայժմ...» (Վ., 12):

Այսպես հարկ ենք համարում նշել նաեւ գրաբարյան այն արտահայտություններն ու դարձվածքները, որոնք ուղղակի ռազմական եզրույթներ չեն, բայց գործածվել են այդ բնագավառում՝ զինվորներին ոգևորելու, վստահություն ներշնչելու, խրախուսելու նպատակով: Դրանք հրաման, կոչ, կարգադրություն արտահայտող գոյականներ են, բայեր, ձայնարկություններ եւ նախդրավոր կապակցություններ՝ ի մարտ, ի սուր, ի զեն, առավել, օ՛ն առաջ եւ այլն:

Ներոսների խոսքին պարամական երանգ են փալիս նաեւ դերանունների, մակբայների ու շաղկապների հնացած ձեւերի գործածությունները:

Այդ դերանուններից են՝ նոցա, նորա, սույն, դույն, յուրյանց, ինքզինք, մերայինք, ամենեւեյան, դորանից եւ այլն, գրաբարյան հոլովական եւ խոնարհման ձեւերից ծագող

մակբայները՝ երբեմնակի, բազմիցս, հարկավ, երիցս, կանխավ, հանիրավի, հանապազ, շաղկապներ՝ իցն թե, քանզի, ըստ ամենայնի եւ այլն: Նարկ է նշել, որ պարամականություն առաջացնելու նպատակով այս ձևերի գործածությունը վիպասանը չարաշահել է հայկապես «Նայոց բերդը» եւ «Վարազդար» վեպերում:

Բերենք բնագրային օրինակներ՝ «Ուլքէ՛ր են սոքա, եւ ո՛ր եք քանում դոցա» (Պ. թ., 330), «Կանխավ, երբ դոցա շոշափում են գավազանով, նոր միայն խոստովանում են, որ խաբվել են արքայի հրամանից» (Ն. բ., 24), «Նոցա գրույցի խորհուրդին ես հասու չեմ, արքա, քանզի գրուցում են հանապազ առանձին» (Ն. բ., 110), «Իցն դու լուսաբանես սակավիկ մի...» (Վ., 41), «Կարո՞ղ եմ իմանալ, երբ է լինելու դույն խնջույքը» (Վ., 230) եւ այլն: Իսկ հեղինակային խոսքում երբեմն գործածված վասնզի շաղկապը ընդհանուր խոսքաշարին համահունչ լինելու միպոմն ունի. «Թե ի՞նչ երկիր է Արմենիան, Վարազդարը պարկերացնել չէր կարող, վասնզի ծնվել է Բյուզանդիոնում եւ մանուկ հասակից գրկվել ծնողներից» (Վ., 174):

Ձորյանը շատ դեպքերում գրաբարյան այս ձևերի հետ միասին գործածել է նաեւ դրանց գրական ձևերը. «- Տեր ավագներ, թվում է ինձ՝ սույն այս լուրը կարոտ է ստուգման» (Վ., 14), «Իցն եւ հրավեր է գարնան: Գուցեւ իշխան Կամսարականը խրախճան է քալու մեզ» (Ն. բ., 9), «Դու նրանց քերն ես միշտ եւ հանապազ» (Ն. բ., 292), «Վասնզի ինքը ես կլինի կարի դժգոհ... թերեւս նախարարներից առավել» (Ն. բ., 154), «Բոլորեքյան գիպեն... հայրնի՛ է ամենքին...» (Վ., 6), «Եթե մնար դույն այդ նամակը» (Վ., 133) եւ այլն: Մեր կարծիքով, գերազանցապես մրացածին կամ արհեստական այս ձևերի գործածությունը ոչ միայն չի ծառայում պարոմի լեզվին պարամականություն հաղորդելուն, այլեւ ծանրացնում ու խճողում է խոսքը:

Եռագրության մեջ հաճախ են գործածված գ նախդիրով դերանունների հոլովված ձևեր. «Նեռացրեց զիս իր աչքից, թողնելով՝ Կավաշում» (Ն. բ., 235), «Կամեցավ մերկացնել զիս իմ գենքերից» (Ն. բ., 177), «Չկարեցավ գրկել զինքը զինելիս մասնակցելու հաճույքեն» (Պ. թ., 419):

Ընդհանուր խոսքաշարում ոճաբանական նրբերանգներ են պարունակում նաեւ ո, ե, ու հոլովիչներով կազմված գրաբարաձեւ հոլովման բառաձևերը: Օրինակ՝ «Ես այդ թողնում եմ աստծո ողորմության վրա» (Ն. բ., 315), «Պապը մրածում էր, թե արդյոք Վադեան ինչո՞ւ է հրավիրում իրեն, եւ այն էլ ոչ թե Բյուզանդիոն, այլ .. Տարսոն» (Ն. բ., 518), «Կայսեր կողմից ուղարկված հրավերը դուր չեկավ Բաթին» (Պ. թ., 374), «Վարազդար արքային խորհուրդ քվեցին՝ պարծել դոցա զինու գործյամբ» (Վ., 379) եւ այլն: Որոշ բառերի քրական հոլովի «ի» հոլովիչի փոխարեն գրաբարի նմանությամբ, գործածում է «ու» հոլովիչը՝ հայտ, ժամու, պահու եւ այլն: «Նայու աստվածը օգնել է ձեզ...» (Վ., 158), «Անպարտեհ ժամու ես այցելել արքայահորը, նա քակավին ննջում է» (Ն. բ., 144):

Ուշագրավ են ածականի գերադրական աստիճանի կազմությունները հույժ, կարի բառերի հարադրությամբ՝ հույժ քազնապալից, հույժ պակասավոր, հույժ կարեւոր, հույժ շքապ եւ այլն: «Նոքա հույժ քկար են իմ դեմ ելանելու» (Ն. բ., 338), «Այդ լուրը կպահես հույժ գաղտնի ամենքից» (Պ. թ., 205), «Նախարարաց մեծ մասը հույժ դժգոհ էր Արշա-

կից» (Ն. ք., 27), Նամառ է հույժ ... ինքնասած» (Պ. թ., 130) «-Իշխան, ես կարի անհրաժեշտ խնդրանք ունեմ առ քեզ եւ հուսամ չես մերժի» (Ն. ք., 214), «Անշուշտ, ինքը ես կլինի կարի դժգոհ ...» (Վ., 341), «Քո ներկայությունն այսպեղ կարի կարեւոր է, քան ռազմի դաշպում» (Պ. թ., 128) եւ այլն:

Կերպարների խոսքը ոճավորելու նպատակով գործածել է նաեւ հոդառության ձևեր, երբ դերանվանական հափկացուցիչ ունեցող հափկացյալն սպանում է սպացական «ս» հոդ: Այսպես. «Ուրեմն, արքա, մեղավորը ե՛ն եմ իմ բացակայությամբս» (Ն. ք., 445), «Գալիս եմ իմ հրավերովս» (Վ., 137), «Մի երկու կարճ փողոց անցնելուց հետո կլինենք իմ քանս» (Պ. թ., 22), «Ներիր, արքա՛, համարձակ իմ հարցմունքիս համար» (Ն. ք., 154) եւ այլն:

Խնդրո առարկա քերականական ձևերն օգտագործելիս՝ Զորյանը փորձում է սրել-ծագործ աշխատանք կատարել: Նայելի է, որ ս հոդով որոշ մակբայներ աշխարհաբարին են անցել գրաբարից: Օրինակ՝ բազմիցս, երիցս, քանիցս եւ այլն: Նեղինակը կազմել է գործածել է ս հոդով նոր մակբայներ. «Դժվարինս է հասկանալ բյուզանդական խաղերը նենգ» (Ն. ք. 145), «Այո, իշխան, լավագույնս է հանձնառու լինիս» (Վ., 252), «Ես անհունս շնորհակալ եմ» (Վ., 425), եւ այլն:

Իսկ դ հոդը գործածված է բարձրաստիճան անձանց եւ դիմելաձևերում («Նրամա-նիդ պարասաք, սպարապեք» (Վ., 159), «Էհ, սիրելիդ իմ իշխան, բարի լինի գալուսդ» (Ն. ք., 305), եւ՝ օրինանքի եւ մաղթանքի ժամանակ՝ խոսքին հաղորդելով վերամբարձ եւ հանդիսավոր երանգ. «Եւ թող հար ու հավիքյան օրհնված լինի մեծ քունը Կամսարակա-նաց եւ գերդասպանը քո, սիրելիդ իմ իշխան...» (Ն. ք., 278): «Բարի՛ լինի իշխանությունդ, արքա՛: Աչքդ քաղցր ժողովրդյան վրա... Չքնեսես ո՛չ ցավ, ո՛չ պարերազմ... Օրերդ անց-նեն խաղաղության մեջ...» (Վ., 61),- մաղթում է մի ծերունի: Մեկ ուրիշն էլ ձայն է քալիս. «Երկա՛ր արեւ արքային եւ խաղաղություն երկրին... Բարի՛ լինի գալուսդ, արքա՛: Բարի՛ գործերով փառավորես քե՛զ եւ Աշխարհն Նայոց...» (Վ., 48), բայց Մերուժանի հետևից անիծում են. «Գնալո՛ւ լինի՛, գալո՛ւ չլինի՛, անիրա՛վ մոխրապաշտ» (Պ. թ., 43):

Նաճախ հանդիպում են սպացական «դ» հոդի եւ դերանվան միաժամանակյա գոր-ծածության ձևեր՝ կերպարների խոսքին հանդիսավորություն հաղորդելու նպատակով: Բերենք բնագրային մի քանի օրինակ. «Քո կարգադրությունդ, արքա, ես կհամարի թշնամություն իր դեմ: Չե՛ն ասի արդյոք, որ դու վախեցար Գնելից եւ ... դա առիթ չի՞ դառ-նա, որ քո հայր եւ անհայր թշնամիներդ չարախոսեն...» (Ն. ք., 154), «Տո՛ւր քո խորհուրդդ, քեր Սահառունի...» (Վ., 33) եւ այլն:

Շատ քիչ եղանակավորող դարձվածքներում է որոշիչ հոդը հանդես գալիս որպես կառույցի գոյական բաղադրիչի անբաժանելի մասնիկ: Շինականները նգովում եւ անի-ծում են անօրեն պարսիկներին, նրանց կատարած ավերածությունների համար: «Պարսի-կի ա՛չքը խավարի» (Պ. թ., 141), «Կայենի նգովքը անօրեն պարսիկի վրա,- ձայնը բարձ-րացրեց իշխանուհին: - Կայենի նգովքը ուրացող Մերուժանի գլխին» (Պ. թ., 72): «Բաբե-լական կրակը նոցա գլխին: Ամոթ Արշակ թագավորին» (Ն. ք., 68): «Ասործու նգովքը ամե-նո՛ն գլխին...» (Ն. ք., 406) եւ այլն:

Վեպերում գրական հայերենի բայաձևերի հետ գուցահեռ գործածվել են նաև լեզվական փոքրեր գործոններից առաջացած հնաբան բայաձևեր, որոնք իրենց հերթին, նպաստել են միջավայրի երանգավորմանը՝ որպես պարմականություն առաջացնող միջոցներ: Դրանցից են՝ ելանել, սափակել, գիջանել, խոխարել, ագուցել և այլն: Բերենք օրինակներ. «Եթե պարսկերեն սոքա՝ կսափակեն ինձ, կսափակեն, անփարակույս» (Պ. թ., 276), «Ախ, եթե հնար լիներ գրանել, կալանել և երբեք այդ ոճրարար սպահակներին» (Ն. բ., 75), «...Թերևս բերդերը գիջանեն հանուն հայրենի երկրի ապահովության» (Ն. բ., 101), «... Իրենք սակավ են, ուստի չեն կարող ելանել թագավորի դեմ» (Վ., 217) և այլն: Նեղիմակը որոշի պաշտոնով գործածել է գրաբարյան եալ վերջավորությամբ անցյալ դերբայը՝ հարակապար դերբայի փոխարեն՝ ծածկյալ, նշանակյալ, ծպտյալ և այլն: Ահա օրինակ. «Ես միմիայն խորհում եմ իմ կորուսյալ ծնողներիս ու սիրած աղջկան փնտրելու մասին» (Պ. թ., 28), «Անիծյալ պարսիկը քանդեց մեր շենքերն ու քաղաքները...» (Պ. թ., 135), «Զինյալ մարդիկ գահասրահի հեպտի դռնից դուրս փարան կապյալ սպարապետին» (Վ., 304): Նաճախ են հանդիպում որոշ բայերի անցյալ կապարյալի իմաստով կազմված՝ հեծավ նժույգը, դուռը դրավ, դրավ կրծքին, նշան արավ, մարմանիշ արավ, վրա բերավ, թողավ փախավ հնացած ձևերը, որոնք գործածված են հիմնականում շինականների երկխոսությունների մեջ:

Սահմանական եղանակի վաղակապարի և անցյալ վաղակապարի իմաստները հաճախ արտահայտվում են նույն եղանակի հարակապարի և անցյալ հարակապարի ձևերով: Օրինակ. «Բսկ եթե թագավորը իրենից պահանջի պարսկերեն լեզու և եղած դեպքը - ինքը կպարսի և չի թաքցնի ոչինչ...» (Վ., 126), կամ «Ես, փեր Սահառունի, հրավիրած եմ քեզ քանի մի խնդիրներ պարզելու և հուսամ, բարի կլինես ինձ օգնելու» (Վ., 126): Միջավայրի լեզվական երանգավորում է ստեղծել նաև կրավորակերպ չեզոք բայերի առանց վ-ի գործածության ձևերով՝ վախճանել, մոլորել, հնազանդել, ապաքինել, զմայլել. «Այդ լուրն ամենով նրա հոգին խաղաղեց» (Վ., 84), «Շինականները մոլորել էին անփառ փանող ճանապարհին» (Ն. բ., 75), «Նարկ է սրիպել նոցա հնազանդելու և իրենց գործին անցնելու» (Ն. բ., 130) և այլն:

Խոսքին հնարույր երանգ են հաղորդել գրաբարյան հափուկ ձևերով կազմված բաղադրյալ ստորոգյալները՝ անշուշտ եմ, ծպտյալ է, հարկ է, հույժ զարմաց է և այլն: «Մեծահույս եմ՝ անվնաս ես գերդաստանիվ, իշխան սիրելի...» (Պ. թ., 279), «Անշուշտ եմ՝ այժմ Արշակն այնպիսի վիճակի է, որ այլևս չի զբաղվի բերդի գործերով» (Ն. բ., 346), «Վստահ եմ՝ իշխանները հաստ կլինեն նոցա նենգ խաղերին» (Ն. բ., 210):

Եռագրության մեջ գործածված են նաև գրաբարյան այլ բայաձևեր, որոնք, սակայն նույն ոճական արժեքը չունեն, ինչ որ նախորդները. «-Գռհանամք, որ փրկվեցինք պարսից ահից ու մահից» (Վ., 758), «Բերդապահների առաջին նետերը սուլելով ու միմյանց առաջելով, գնացին նրանց ընդառաջ» (Ն. բ., 540), «- Տեր, լեր օգնական ազգիս հայոց...» (Ն. բ., 339):

Գրաբարյան քերականական ձևերից բացի, ոճական որոշակի նկարագրումներով, Զորյանը մասամբ փոխ է փոխել նաև արևմտահայ ձևերին՝ փորձելով միջին հայերենին

և արևմտահայերենին հասարակ լեզվական իրողությունները փանել պարամական այն ժամանակները, երբ դեռևս դրանք լեզվում չէին ձևավորվել, այսինքն՝ թույլ է տվել ժամանակավորություն, որը խրախուսելի չէ: Մեր կարծիքով, հիշյալ ձևերը, որոնք, բարեբախտաբար, այնքան էլ մեծ թիվ չեն կազմում, գործածված են խոսքը բազմազան դարձնելու կամ էլ՝ բառապաշարի փարբեր շերտերից օգտվելու նպատակով: Նարկ է նշել, որ այս ձևերի գործածությունները համարյա թե չկան «Պապ թագավոր» վեպում, բայց հաճախված են մյուս երկու վեպերում:

Արևմտահայերեն բառեր են գործածված թե՛ հեղինակային և թե՛ հերոսների խոսքում: Օրինակներ. «Մեկը սրարշավ մոտենալով, գրեթե պոռաց հեռապառ» (Պ. թ., 163), «Նրանց ձեռքերը, երեսները կանաչել էին, աղտոտվել...» (Ն. բ., 59), «Վարի պարսպի աշխարհները դիպելիս՝ Փառանձեմը դժգոհեց դրանց ընթացքից...» (Ն. բ., 530), «Նաջորդ օրը առավոտ կանուխ Վաղարշապատից դուրս եկավ մի մեծ ասպախուճ...» (Վ., 39) և այլն:

Ներքոսների խոսքում այդ բառերը անբնական են հնչում, չունեն որևէ ոճական արժեք և չեն ձուլվում պարամային խոսքին: Ինչպես օրինակ. «Ես այդ սուրհանդակի մոտ հագիլ կարեցա զսպել ինձ, որպեսզի չպոռամ, թե դա անամոթություն է և գողություն» (Վ., 28), «Նրամանդ, իշխան,՝ իսկույնով ասաց երիտասարդ Նավմունին» (Ն. բ., 16):

Նեղինակային խոսքում հանդիպում են նաև արևմտահայերենին հասարակ հոգնակիի կազմության անհարկի գործածության ձևեր. «Երբ նրանք Ավագ դռնից ներս մտան՝ ասես զվարթացան, քայլերնին արագացան...» (Պ. թ., 20), «Շինականները լուռ էին, խոսքերնին մեկ արած» (Ն. բ., 101):

Զորյանը երբեմն կիրառել է միջին հայերենից արևմտահայերենին անցած միջնավանկի ա ձայնավորի կրճատմամբ բառաձևեր. «Նրամանքդ, փեր իշխան, շուրով թագավորահայրը կարթնա, և կարող ես այցելել նորան» (Ն. բ., 314), կամ՝ «Չհասցրեցի ես նորան ճանչնալ, իսկույն երեսը թաքցրեց» (Վ., 184):

Արևմտահայերենին խորթ չէ ա>ը հնչյունափոխությունը, որը նույնպես գալիս է միջին հայերենից:

- Լսողները ի՞նչ պիտի ըսեն. սպանվել է հայ իշխանաց ձեռքով» (Վ., 365):

Գործածել են նաև արևմտահայ գրական լեզվին բնորոշ ե-թեքությունով բառաձևեր՝ բացառական հոլովի իմաստով. «Ծառաներն լսել է անոնց կալանելու մասին» (Ն. բ., 215), «Պարսիկների հարձակման մասին իմացել է հավասարի արյուրներե» (Պ. թ., 384) և այլն:

Նախդիպում են նաև կը եղանակիչով կազմության արևմտահայ ձևեր հերոսների խոսքում. «Կաղաչեմ՝ փարափես խոռվքս» (Պ. թ., 79), «Կխորհենք, փեր Վահեաունի, կխորհենք անկասկած» (Վ., 15), «Կխնդրեի մնաս մի փոքր» (Վ., 83):

Արևելահայերեն որպեղի՛ց, բերեց բառերի փոխարեն գործածել է բարբառային ուսկի՛ց, բերավ ձևերը. «Ուսկի՛ց իմացար, փեր Գնունի, ո՛վ բերավ այդ լուրը» (Վ., 3):

Նայրնի է, որ հարակապարի ձևը ավելի ուշ ժամանակներում է գործածության մեջ մտել իբրև դերբայ: Գրաբարի շրջանից համեմատաբար քիչ բառեր են ավանդվել հարակապարի ձևով. այն էլ անվանական գոյականական և ածականական կիրառությամբ: Եւ

ահա Սյր. Զորյանը չորրորդ դարում ապրող մարդկանց խոսեցնում է մի լեզվով, որի մեջ հաճախական է հարակապարով կազմված դիմավոր ձևեր: Ահա օրինակ. «Նայր մարդպետը առանձին բան չի արած» (Պ. թ., 419), «Թագուհին ինձ ոչինչ չի հայտնադ» (Պ. թ., 367), «Այդ խոսքերը ավագների մեջ մեծ փարակույս է առաջ բերած» (Վ., 94), «Նասու չի եղած» (Վ., 99), «Բնավ չեմ լսած» (Վ., 19) և այլն: Նարակապարի այս ձևերը շարք են գործածված «Վարագդար» վեպում: «Իսկ այդ հույն հոգեւորներն ինչո՞ւ են եկած, իշխաններ» (Վ., 131), «Նոքա հաճախ են եղած հոռոմաց մայրաքաղաքում» (Վ., 215), «Բյուզանդիոնի կրկեսում մեծ համբավի է արժանացած մի հայ երիտասարդ» (Վ., 89): Գործածել է նաև հեղինակային խոսքում. «Մուշեղը ընկերված լինելով գահաժառանգի խնամակալ, խոսեց այնպես, կարծես ոչինչ չի եղած, որեւէ որոշում չեն ընդունած...» (Վ., 108):

Դիպարկված քերականական իրողությունները հեղինակը միգուցե գործածել է ոճաբանական որոշակի նրբերանգներ առաջացնելու միտումով:

Շարահյուսական իրողություններից, պարմական ոճավորման նպատակով, Զորյանը հապկապես շարք է դիմել շրջադասությանը: Որքան էլ գրաբարյան բառերն ու քերականական ձևերն առաք լինեն, այնուամենայնիվ, դրանք չեն վեպերի լեզվի պարմական ոճավորման հիմքը: Պարմականության խնդիրը եւ՝ հերոսների եւ՝ հեղինակային խոսքում վիպասանը լուծել է ավելի շարք շարադասական-շարահյուսական միջոցներով: Խոսքի կապակցման, հապկապես շարադասական հին ձևերի գործածությամբ, միայն ժամանակակից բառերով ու արքայապարություններով գրողը կարողացել է պարմանք ստեղծել, ասես, թե խոսում են Դ. դարի լեզվով: Նախադասությունների գերադաս եւ սպորադաս անդամների շրջուն շարադասությամբ կառույցները (հապկապես որոշիչ-որոշյալի, հապկացուցիչ-հապկացյալի) ավելի հանդիսավոր ու վերամբարձ են դարձնում բարձրաստիճան հերոսների խոսքը: Ահա օրինակ. «Նույնը խորհում եմ ես, քեր Ամապուրնի, քանզի սա խոսք չէ հասարակ» (Վ., 64), կամ «Պալարում չունի նա խորհրդարությունը լրջախոհ, հարկ է խոսեմ ես նրա հետ եւ չթողնեմ անխրապ» (Պ. թ., 354), «Դու եղիր հանգիստ Զարմանդուխտ, ամենը հուսամ կլինի բարեհաջող: Եթե հայարապարանոց Վաղեսը հրավիրել է ինքը, անշուշտ բարեկամության նպատակով, եղիր դու հանգիստ..., - խոսեց Պալար՝ բռնելով կնոջ ձեռքը» (Պ. թ., 529): Այս օրինակներում սպորադայալի արքայապարած իմաստն ավելի ընդգծելու նպատակով խոսքի քրամաբանական շեշտը դրվել է այդ անդամի վրա, որն ընկել է ենթակայից առաջ: Ենթակայի եւ սպորադայալի շրջուն շարադասությունը խոսքը դարձնում է անսովոր ոճի, նրան փալիս հանդիսավորություն: Ներսիսի հոգեկան խռովքն արքայապարելիս, նախադասության անդամների շրջուն շարադասությամբ ձևերը ավելի են ընդգծում ու շեշտում այն: Ահա օրինակ, Մուշեղի դավադիր սպանությունը մեծ վիշտ է պարճառել եղբորը՝ Մանվելին. «Ընկներ ռազմի դաշտում թշնամյաց դեմ ճակարելիս, հայրենյաց համար՝ փառք է մեզ՝ Մամիկոնից: Մակայն մեռնել եղեռնագործի արաքով՝ դա վիշտ է խորին... եւ ներելի չէ անողին» (Վ., 233):

Ոճավորման այս ձևերը ավելի շարք գործածվել են նախարարների, բարձրաստիճան պաշտոնյաների եւ հոգեւորականների խոսքում, եւ այդ հերոսների լեզվի անհարապանացման նպատակն ունեն: Շարադասության յուրաքանչյուր փոփոխություն կարող է

փոխել նախադասության հինգերանգը, որն էլ վկայում է լեզվում քերականական արքահայրության այդ երկու միջոցների խորը փոխադարձափոխանակության մասին: Շարահայրությունն ու հինգերանգը հաճախ միասնաբար կարող են ծառայել միևնույն իմաստի արքահայրմանը՝ դրանով իսկ նպաստելով արքայ նախադասության մտքի արքահայրականության աճին:

Կամ՝ Խաղ եպիսկոպոսի գրույցը Ներսես կաթողիկոսի հետ. «...Այնուհետև պետք է ասեմ վեհիդ, որ թագավորը մեր, Ձիրավի հաղթության հեթանոսական խրախճանքից հետո, ծրագրում է գործեր դիվական, որ անհնարին է հանդուրժել» (Պ.թ., 353), կամ՝ «Կին է վշտահար, իցն ունենա խոհեր սրտահույզ» (Վ., 38) եւ այլն:

Նմանաբար կառույցները ավելի քիչ են հեղինակային խոսքում, քան հերոսների: Նա այսպես էլ պահպանել է չափի զգացումը, մինչդեռ չարաշահելու դեպքում, անցյալի պարարտ սրտեղծելու փոխարեն, կարող էր խախտել լեզվական հիմնական համակարգը: Այսպես, օրինակ. «Թագուհին նկարեց եւ այն, որ նա հանգիստ չէ եւ մտայլ է անսովոր» (Պ.թ., 324), «Պապի սպանության լուրը ցնցեց ու տարակուսների տեղիք տվեց ժողովրդյան մեջ, մանավանդ, որ սպանությունը վերագրում էին իշխանաց հայոց» (Պ. թ., 465):

Ինչպես տեսնում ենք, որոշիչ-որոշյալի եւ հարկացուցիչ-հարկացյալի շրջուն շարահայրությամբ ձևերը եւ՝ հերոսների, եւ՝ հեղինակային խոսքին հնարույր երանգ են հաղորդել:

Սր. Զորյանը շրջուն շարահայրության է դիմել նաեւ շինականների խոսքը ոճավորելու նպատակով: Օրինակ.

«- Մեղա՛ւ ասավա՞ծ, սա արդեն չար է մտածում եւ ուզում է ամենքիս գրկել հացից հանապազօրյա...» (Պ. թ., 344): «- Զպետք է հավարալ ոչ հոռոմներին, ոչ պարսից վարարալո նախարարաց եւ ոչ կրոնավորներին գրախոս» (Ն. բ., 135):

Պետք է նշել, որ պարամոլեպտիկում ավելի քիչ են գործածված հարկացուցիչ- հարկացյալի երադաս գործածության ձևերը, այն էլ պարահում են միայն կերպարների խոսքում: Օրինակ. «Նախարարները եղել են ինքնագլուխ, ինքնակամ, ուստի եւ հազիվ համաձայնեն բերդը յուրյանց զիջանել քեզ, արքա» (Ն. բ., 162) ասում է Վասակ սպարապետը, «Նույժ ցանկալի է կարծիքը քո» (Պ. թ., 630), «Գնանք անտառը Խոսրովի» (Պ. թ., 37), հանդիպում ենք նաեւ հեղինակի խոսքում՝ «Եւ մարդպետի միշտ աշխույժ ու սրամիտ պարունները ցրում էին մտայլը արքայի» (Վ., 49):

Ինչպես նկատում է Ն. Ավերիսյանը՝ «Զնայած 5-րդ դարի գրաբարում զգալիորեն գերակշռում էին նախադաս որոշիչները, այնուամենայնիվ, դրանց երադաս գործածությունները, նախադասների նման, պետք է համարել բնական եւ ոչ շրջուն շարահայրության արքահայրություն»¹: Մինչդեռ այլ է պարկերը ժամանակակից հայերենում, որտեղ որոշիչների շարահայրությունը փոխվել է այնպես, որ նրանց երադաս գործածություններն ընդհանրապես դիտվում են իբրեւ շրջուն շարահայրության դրսևորումներ, ուստի «այս հերադասությունը մի ձևավորություն է միայն, որ գործ է ածվում ճարտասանական

1 Ն. Ավերիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972, էջ 11:

ազդեցություն թողնելու և ոճին վսեմություն փալու համար»²: Ինչպես երևում է բնագրային օրինակներից, շարադասական այս միջոցը գործածվել է հիմնականում կերպարների խոսքում՝ դրանց հաղորդելով բարձրաժողովուրդ և հնաբույր երանգ:

Նեղինակային խոսքում Զորյանը նշված քերականական միջոցը կիրառել է հիմնականում ոճի ներդաշնակությունը պահպանելու համար. այն էլ միայն որոշ դեպքերում, երբ վերաբրադրվում է կերպարի կամ փոխյալ ժամանակաշրջանի մարդկանց ասածը: Բերենք համապատասխան օրինակներ. «Բայց և այնպես ամենքը հարգում էին Երեմիային՝ նախ, որ Ամարունյաց նշանավոր փոհմիջ էր, երկրորդ, որ չորս-հինգ փարի Պապի հեղ եղել է Բյուզանդիայում և «հմուտ էր իմաստասիրաց և փիլիսոփայից գրոց» (Պ. թ., 280): Այսպես հեղինակը վերաբրադրել է Փավստոսի խոսքերը Երեմիայի մասին: Մեկ այլ օրինակ. «Նայր Փավստոսը, ընդհակառակը, զարմանալի սրափես ու սրահայաց էր, հիսնալի նշմարում էր ամեն ինչ և լսում ամեն բան, կարեւորները գրի առնում և պահում ծածուկ «գալոց սերունդներին ավանդելու մտքը» (Պ. թ., 278): Այսպես էլ գործածել է հենց պարմիջի խոսքերը իր հայրնի աշխարհությունը գրելու մասին:

Զորյանը հաճախ է գործածել նաև բայի պարագայական լրացումների նմանափայլ շարադասության ձևեր: Օրինակ. «Եւ սպարապետը լեց գլխիկոր» (Վ., 37), «Իսկ Կամսարականը մի առժամ լեց մռայլ» (Ն. բ., 74), «Լսեց Պապն այս ամենը և փնթաց սրտախոր» (Պ. թ., 84), «Սկզբում մարդիկ չէին հավարում. թվում էր՝ պարսիկներն այդ քաղաքում են դիպրմամբ» (Պ. թ., 37): Այս օրինակներում նույնպես հնչեղանավոր նպաստել է նախադասության միջին արտահայտչականությանը:

Որոշ բառակապակցությունների շրջադաս գործածությունը դրանց մի փեսակ կալությունություն է փալիս՝ վերածելով խոսքին պարմականություն փոխող գործուն միջոցների: Օրինակ՝ աշխարհը Նայոց, ժողովուրդը հայոց կապակցությունները խիստ հնաբույր են հնչում հայոց բառի երադաս գործածության պարմառով. «Նախարարները հայոց այդ եւս կարարեցին անարբունջ» (Ն. բ., 22), «Նարկ է ամրացնել և անառիկ պահել բերդը հայոց» (Ն. բ., 237) և այլն:

Երբեմն հեղինակը մի քանի բառակապակցություն գործածում է շրջուն շարադասությամբ՝ «քանի մի վայրկյան հեղո» (Վ., 10), «քանի մի խոսք ասեց» (Վ., 94), «քանի մի ավագներ հրավիրել» (Վ., 16): Մի անորոշ դերանունը գործածում է փարբեր կիրառությամբ՝ «Ունի՛ մի հիմք այդպես խոսելու» (Վ., 63), «Երկիրը մի ի՛նչ կշահի արդոք» (Վ., 33), «Լավագույնս է՝ չիմանա մի ոք» (Վ., 118), «Մի երկվայրկյան չանցած» (Պ. թ., 659) և այլն:

Պարմավեպերի թեման իր պահանջներն է թելադրել գրողին: Սպ. Զորյանին հաջողվել է գրական լեզվի բառամիջավայրում, առանց հնաբանությունների առաք գործածության, խոսքի պարմականությունն ապահովել նաև ոճական այս հնարանքի՝ շրջադասության և բարձրաժողովուրդ, գրքային բառերի միջոցով: Նա կարողացել է գրաբարին հարուկ քերականական իրողությունների փեղին և ճաշակով գործածությամբ՝ սրելով պարմական դարաշրջանին հարուկ հնաբույր երանգ արտահայտող ոճավորված և կանոնիկ խոսք:

2 Մ. Արեղյան, Նայոց լեզվի փեսություն, Երևան, 1965, էջ 543: